



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԵՄՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Երևան, Կառավարական պոստ 1

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 03/01

(«Էլքոր Դիսթրիբյուշն» ՍՊ ընկերության 11.12.2017թ.-ի վարչական բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճելու մասին)

Ք. ԵՐԵՎԱՆ

«20» հունվարի 2018թ.

ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովը՝ նախագահությամբ ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի, ուսումնասիրելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 26.09.2017թ. թիվ 53/4 որոշման վերաբերյալ «Էլքոր Դիսթրիբյուշն» ՍՊ ընկերության 11.12.2017թ.-ի վարչական բողոքը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Բողոքի էությունը և ներկայացված պահանջը.

«Էլքոր Դիսթրիբյուշն» ՍՊ ընկերությունը (այսուհետ նաև՝ Ընկերություն կամ Բողոք բերած անձ)՝ ի դեմս տնօրեն Արմեն Մակարյանի, 11.12.2017թ.-ին բողոք է ներկայացրել ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով (այսուհետ՝ նաև Հանձնաժողով)՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Գանգատարկման հանձնաժողով) 26.09.2017թ. թիվ 53/4 որոշման (այսուհետ նաև՝ Որոշում) վերաբերյալ:

Բողոքը մուտքագրվել է Հանձնաժողովի քարտուղարություն 11.12.2017թ.-ին:

Բողոք բերած անձը հայտնել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 02.05.2017թ.-ի թիվ 1012308 հանձնարարագրի հիման վրա իրականացված ստուգման արդյունքում 02.08.2017թ.-ին կազմվել է թիվ 1012308 ստուգման ակտը (այսուհետ՝ նաև Ստուգման

ակտ), որով Ընկերությանն առաջադրվել են հարկային պարտավորություններ, մասնավորապես՝ եկամտային հարկի մասով բյուջե վճարման ենթակա գումար՝ 8.571.200 ՀՀ դրամի չափով, ավելացված արժեքի հարկի մասով բյուջե վճարման ենթակա գումար՝ 7.398.428 ՀՀ դրամի չափով:

Ընկերությունը բողոքարկել է Ստուգման ակտը Գանգատարկման հանձնաժողովին, որի արդյունքում 26.09.2017թ.-ին Գանգատարկման հանձնաժողովի կողմից կայացվել է թիվ 53/4 Որոշումը, որով Ստուգման ակտի 3-րդ կետից նվազեցվել է ընդամենը 6.815.472 ՀՀ դրամ: Ընդ որում, նշված որոշումը ուղարկվել է փոստային առաքման միջոցով, որն Ընկերությունը ստացել է 06.10.2017թ.-ին:

Ըստ Բողոք բերած անձի՝ հատկանշականն այն է, որ Ընկերության կողմից առաջարկվող 7.398.428 ՀՀ դրամ վարչական տույժի /տուգանքի/ փոխարեն Գանգատարկման հանձնաժողովի որոշմամբ նվազեցվել է ընդամենը 6.815.472 ՀՀ դրամ՝ 582.956 ՀՀ դրամով պակաս գումար: Հանձնաժողովի որոշման արդյունքում նվազեցվող գումարը իր մեջ չի ներառել 02.08.2017թ.-ին կազմված թիվ 1012308 ստուգման ակտի 3-րդ կետի հիման վրա հաշվարկված վճարման ենթակա տույժի գումարը՝ 271.160 ՀՀ դրամ և 2017թ. մարտ ամսին ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ տարածք ներմուծված ապրանքների համար հաշվարկված և մարտ ամսում հաշվանցված ԱԱՀ-ի 311.796 ՀՀ դրամ գումարը (մարտ ամսում հաշվանցված, քանի որ վճարումը կատարվել է մարտ ամսում, իսկ ներմուծման հայտարարագիրը ներկայացվել է մինչև հաջորդ ամսվա 20-ը):

Բողոք բերած անձը պնդել է, որ Գանգատարկման հանձնաժողովի 26.09.2017թ. թիվ 53/4 որոշումն ընդունվել է օրենքի սխալ մեկնաբանման և կիրառման արդյունքում, իրավաչափ չէ և ենթակա է վերացման և/կամ փոփոխման հետևյալ պատճառներով.

26.09.2017թ.-ին Հանձնաժողովի կողմից ընդունված թիվ 53/4 Որոշմամբ Գանգատարկման հանձնաժողովն արձանագրել է. «(...) վերոնշյալ իրավական կարգավորումների վերլուծությունը չի բացառում հարկ վճարողի մոտ իրավական ակտերի դրույթների տարաբնույթ և երկիմաստ ընկալումները, և որպես հետևանք, հաշվանցման համար հաշվետու ժամանակաշրջանի ընտրությունը հարկ վճարողի համար առաջացնում է ոչ բարենպաստ հետևանքներ և պատասխանատվության միջոցներ»:

Բողոք բերած անձի պնդմամբ՝ ըստ Գանգատարկման հանձնաժողովի ևս քննարկվող իրավանորմերը տալիս են տարընթերցման տեղիք և պարունակում են երկիմաստություններ:

Բողոք բերած անձը պնդում է, որ այսպիսի հանգամանքներում առավել անհասկանալի է դառնում Գանգատարկման հանձնաժողովի կողմից Ընկերության բողոքի մասնակի բավարարման հանգամանքը, երբ Գանգատարկման հանձնաժողովը մի կողմից արձանագրում է, որ իրավանորմերի տարաբնույթ ընկալումների ու երկիմաստության արդյունքում անբարենպաստ հանգամանքներ են ստեղծվում հարկատուի համար, իսկ մյուս կողմից բավարարում է բողոքը մասնակիորեն՝ թողնելով առաջացած բացասական հետևանքների մի մասը՝ 582.956 ՀՀ դրամի չափով:

Ավելին, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Եթե Հայաստանի Հանրապետությունում հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված դրույթները պարունակում են հակասություններ, երկիմաստություններ կամ տարընթերցումներ, ապա հարկման նպատակով այդ դրույթները մեկնաբանվում են, ինչպես նաև հարկային և (կամ) մաքսային մարմինների կողմից (տեղական հարկերի դեպքում՝ նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից) կիրառվում են հարկ վճարողի օգտին»: Այսինքն, ըստ Բողոք բերած անձի, այն դեպքում, երբ Գանգատարկման հանձնաժողովը հենց ինքն է արձանագրում, որ առկա իրավանորմերը պարունակում են երկիմաստություններ և տարընթերցումներ, ապա նախ ստուգում իրականացնող հարկային տեսուչների, ապա նաև Գանգատարկման հանձնաժողովի կողմից այդ իրավանորմերն ուղղակիորեն պետք է մեկնաբանվեն հարկատուի օգտին և հարկատուի նկատմամբ պատասխանատվության միջոցները, այդ թվում՝ նաև հարկերի ժամանակին չվճարման համար սահմանված տույժերը չպետք է հաշվարկվեն և առաջադրվեն:

Տվյալ դեպքում, ըստ Բողոք բերած անձի, իրավական միակ լուծումը Գանգատարկման հանձնաժողովի կողմից ընկերության բողոքի բավարարումը՝ վիճարկվող վարչական ակտի համապատասխան կետի ամբողջական բեկանումը կարող էր լինել: Սույն պարագայում Գանգատարկման հանձնաժողովը փաստորեն վերացրել է ընկերությանը որպես իրավախախտում վերագրված արարքի իրավական

հետևանքները միայն մասնակիորեն, ինչն արդեն իսկ իրավաչափ չէ:

Բողոք բերած անձը պնդում է, որ այս հիմքով, հաշվի առնելով, որ Գանգատարկման հանձնաժողովը չի կիրառել կամ սխալ կամ թերի է մեկնաբանել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները, ընդունել է ոչ իրավաչափ որոշում:

Վերոգրյալից ելնելով, Բողոք բերած անձը խնդրել է մասնակիորեն անվավեր ճանաչել և վերացնել Գանգատարկման հանձնաժողովի 26.09.2017թ.-ի թիվ 53/4 Որոշումը և ընդունել նոր վարչական ակտ, որով կվերացվեն ՀՀ ԿԱ ՊԵԿ խոշոր և միջին հարկ վճարողների հարկային տեսչության-վարչության կողմից 02.08.2017թ. ընդունված թիվ 1012308 ստուգման ակտի 3-րդ կետով առաջադրված հարկային պարտավորություններն ամբողջությամբ:

Վերոհիշյալ բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթի ժամկետը երկարաձգվել է, որի շրջանակներում 19.01.2018թ. ստացվել է Բողոք բերած անձի դիմումը՝ բողոքն անհետևանք թողնելու վերաբերյալ: Մասնավորապես, Ընկերությունը հայտնել է, որ Գանգատարկման հանձնաժողովի 26.12.2017թ. կայացված լրացուցիչ որոշմամբ կատարվել է փոփոխություն Գանգատարկման հանձնաժողովի 26.09.2017թ. թիվ 53/4 որոշման մեջ և նվազեցվող գումար է սահմանվել 7.398.429 դրամը, այսինքն՝ ըստ էության վերացվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ խոշոր և միջին հարկ վճարողների հարկային տեսչության-վարչության կողմից 02.08.2017թ. ընդունված թիվ 1012308 ստուգման ակտի 3-րդ կետը, ինչը Բողոք բերած անձը ակնկալում էր Գանգատարկման հանձնաժողովի որոշման մասնակի բողոքարկման և վերացման արդյունքում:

Հանձնաժողովն ուսումնասիրելով ներկայացված դիմումը, գտնում է, որ «Էլքոր Դիսթրիբյուշն» ՍՊ ընկերության կողմից 11.12.2017թ.-ին ներկայացված բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով՝ հետևյալ հիմնավորմամբ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բացառությամբ բողոքարկման ժամկետի բաց թողնման հիմքով բողոքն առանց քննարկման թողնելու դեպքի, մնացած դեպքերում կիրառվում են դիմումների վերաբերյալ վարչական մարմնի որոշումների համար

սահմանված ընդհանուր կանոնները: Նույն օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն, դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից:

Վերոգրյալի հիման վրա՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Էլքոր Դիսթրիբյուշն» ՍՊ ընկերության կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 26.09.2017թ. թիվ 53/4 որոշման վերաբերյալ 11.12.2017թ.-ին ներկայացված բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ակտի ընդունման մասին վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ